Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2013 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2013 թվականին քաղաքացիներից ստացվել է 1708 նամակ, որից 1680-ը՝ աջակցության խնդրանքով, 13-ը՝ բողոք, 4-ը՝ առաջարկություն, 11-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 99 դիմումներից 91-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 11 դիմումներից 9-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 123 դիմումներից դրական լուծում է ստացել 35-ը, 30 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու նպատակով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 87 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 823 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 613 քաղաքացիների: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 142 քաղաքացիներից բավարարվել է 121-ի խնդրանքը, 49 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 50 հոգու՝ առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2013 թվականին կատարվել է 852 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ /2013թ. /

1. Ստացվել են նամակներ ընդամենը	1708
որից՝	
աջակցություն	1680
առաջարկություն	4
հարցում	11
բողոք	13
այդ թվում՝	
կրկնակի	16
կոլեկտիվ	9
3. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	22
կոմունալ-կենցաղային	40
շինարարական	23
արդձեռ/տրանսկապ/	6
գյուղատնտեսական	13
բնութ. պահպանութ.	1
առևտրի	3
կենսաթոշակի և նպաստի	24
առողջապահության	238
կրթական և մանկ.հիմն	243
գիտութ.կուլտուրա	2
ֆինանսական	823
օրենսդրական	5
քաղ. և որդեգրման	7
աշխ.տեղ և հաշվառման	123
հողհատկացում և հողօգտ.	11
ապարատային	63
այլ հարցեր	61